Ernst & Young CJSC
Vazgen Sargsyan St., 2 Building,
Yerevan, 0010 Armenia,
Kamar Business Center
Tel: +374 60 50 7777
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետիրոջը և Տնօրենների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էներգո Ինվեստ Հոլդինգ›› փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և նրա դուստր կազմակերպությունների (միասին՝ խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Տնօրենների Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Տնօրենների Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

2025թ. հունիսի 6

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	*Ծան.*	*2024թ.*	*2023թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	4,602,896	4,754,912
Ոչ նյութական ակտիվներ և գուդվիլ	12	194,845	380,010
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	13	50,374	23,854
Տրամադրված փոխառություններ	14	135,513	152,665
Հետաձգված հարկային ակտիվներ	10	-	12,396
Ոչ ընթացիկ ակտիվներ		**4,983,628**	**5,323,837**
Պաշարներ		41,340	17,269
Տրամադրված փոխառություններ	14	20,014	3,988
Ընթացիկ հարկային ակտիվներ		3,088	3,858
Բանկային ավանդներ	15	284,543	202,961
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	343,509	324,072
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	493,609	319,684
Ընթացիկ ակտիվներ		**1,186,103**	**871,832**
Ընդամենը ակտիվներ		**6,169,731**	**6,195,669**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		2,706	2,706
Պահուստներ		(158,424)	(158,424)
Կապիտալի բաշխում		(6,389,090)	(6,389,090)
Չբաշխված շահույթ		8,612,890	7,743,727
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		**2,068,082**	**1,198,919**
Չհսկող բաժնեմասեր		695,032	758,685
Ընդամենը սեփական կապիտալ	18	**2,763,114**	**1,957,604**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	107,811	128,551
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	351,382	420,723
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորություններ	22	127,775	157,324
Վարձակալության գծով պարտավորություններ	20	42,548	11,388
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**629,516**	**717,986**
Վարկեր և փոխառություններ	19	543,427	1,260,805
Վարձակալության գծով պարտավորություններ	20	9,221	13,650
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	21	2,091,206	2,203,565
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորություններ	22	29,077	30,904
Ընթացիկ հարկային պարտավորություններ		104,170	11,155
Ընթացիկ պարտավորություններ		**2,777,101**	**3,520,079**
Ընդամենը պարտավորություններ		**3,406,617**	**4,238,065**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**6,169,731**	**6,195,669**

Հաստատվել և ստորագրվել է Խմբի ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 6-ին:

Շավարշ Հայրապետյան
Գլխավոր տնօրեն

«ԷՆԵՐԳՈ ԻՆՎԵՍՏ ՀՈԼԴԻՆԳ» ՓԱԿ
«ЭНЕРГО ИНВЕСТ ХОЛДИНГ» ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
"ENERGY INVEST HOLDING" CLOSED JOINT STOCK COMPANY
03021382
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ РЕГИСТРАЦИОННАЯ СЛУЖБА

1-26 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	***Ծան.***	***2024թ.***	***2023թ.***
Հասույթ	5	2,307,206	1,868,859
Վաճառքի ինքնարժեք	6	(845,040)	(658,482)
Համախառն շահույթ		**1,462,166**	**1,210,377**
Այլ եկամուտ		34,214	15,273
Վարչական ծախսեր	7	(502,552)	(439,285)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում		–	(767,216)
Այլ ծախսեր	8	(51,126)	(98,094)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		**942,702**	**(78,946)**
Ֆինանսական եկամուտ		296,936	347,086
Ֆինանսական ծախսեր		(178,912)	(449,200)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	9	**118,024**	**(102,114)**
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**1,060,726**	**(181,060)**
Շահութահարկի գծով հատուցում/(ծախս)	10	(255,214)	65,345
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		**805,512**	**(115,715)**
Շահույթ/(վնաս) վերագրելի՝			
Ընկերության սեփականատերերին		869,165	(120,152)
Չհսկվող բաժնեմասերին		(63,653)	4,437
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս)		**805,512**	**(115,715)**

1-26 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հագ. դրամ	*Բաժնետիրական կապիտալ*	*Պահուստներ*	*Կապիտալի բաշխում*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*	*Չհսկող բաժնե-մասեր*	*Ընդամենը սեփական կապիտալ*
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	**2,706**	**(158,424)**	**(6,200,862)**	**7,863,879**	**1,507,300**	**897,593**	**2,404,893**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	–	–	–	(120,152)	(120,152)	4,437	**(115,715)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)	**–**	**–**	**–**	**(120,152)**	**(120,152)**	**4,437**	**(115,715)**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ							
Այլ բաշխումներ	–	–	(188,229)	–	(188,229)	(143,345)	(331,574)
Ընդամենը գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**–**	**–**	**(188,229)**	**–**	**(188,229)**	**(143,345)**	**(331,574)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2,706**	**(158,424)**	**(6,389,090)**	**7,743,727**	**1,198,919**	**758,685**	**1,957,604**
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	**2,706**	**(158,424)**	**(6,389,090)**	**7,743,727**	**1,198,919**	**758,685**	**1,957,604**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	–	–	–	869,165	869,165	(63,653)	**805,512**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)	**–**	**–**	**–**	**869,165**	**869,165**	**(63,653)**	**805,512**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**2,706**	**(158,424)**	**(6,389,090)**	**8,612,890**	**2,068,082**	**695,032**	**2,763,114**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	***2024թ.***	***2023թ.***
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	805,512	(115,715)
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով		
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից վնաս/(վնասի հակադարձումից եկամուտ)	-	44,717
Մաշվածություն և ամորտիզացիա	545,820	454,689
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	-	767,216
Վնաս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից	4,166	6,250
Ֆինանսական երաշխավորության գծով եկամուտ	(31,376)	-
Զուտ ֆինանսական ծախս/(եկամուտ)	(118,024)	102,114
Շահութահարկի գծով (հատուցում)/ծախս	255,214	(65,345)
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.		
Պաշարներ	(24,071)	56,480
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(19,437)	5,878
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(103,775)	(19,947)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	**1,314,029**	**1,236,337**
Վճարված շահութահարկ	(225,317)	(358,264)
Վճարված տոկոսներ	(67,401)	(240,948)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**1,021,311**	**637,125**
Դրամակաի հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(190,560)	(358,850)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(9,905)	(5,000)
Դուստր ընկերությունների ձեռքբերում՝ առանց ստացված միջոցների	-	(143,345)
Տրամադրված փոխառություններ	(700)	(19,380)
Տրամադրված փոխառությունների մարում	7,627	14,308
Ստացված տոկոսներ	120,550	31,413
Բանկային ավանդների տեղաբաշխում	(84,000)	(100,000)
Մուտքեր բանկային ավանդներից	-	685,967
Ներդրումային գործունեությունից ստացված/ (ներդրումային գործունեության համար օգտագործված) դրամական հոսքեր	**(156,988)**	**105,113**
Դրամակաի հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Վարկերի և փոխառությունների մարում	(671,894)	(643,092)
Վարձակալության վճարումներ	(15,460)	(19,547)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**(687,354)**	**(662,639)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**176,969**	**79,599**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	319,684	244,418
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,044)	(4,333)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**493,609**	**319,684**